

ՄՐՅՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ճարտարապետական և Շինարարական մասնագիտությունների ուսումնական ծրագրերի արդիականացում՝ նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ուսումնագիտափորձարարական լաբորատորիայի ստեղծմամբ

Վարկ No./ Փոխառություն No./ Դրամաշնորհ No. ԱՐԴ-ԼԱԲ

Պայմանագրի անվանումը. ԼԱԲՈՐԱՏՈՐ ՄԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՈՒՄ

Հղման համարը No.: ԱՐԴ-ԼԱԲ-01/2016

1. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան հիմնադրամը (ՃՀՀԱՀ) Ճարտարապետական և շինարարական մասնագիտությունների ուսումնական ծրագրերի արդիականացման համար, որը պետք է իրականացվի նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ուսումնագիտափորձարարական լաբորատորիայի ստեղծման միջոցով, Համաշխարհային Բանկից ստացել է ֆինանսավորում և մտադիր է այդ ֆինանսավորման մի մասն օգտագործել լաբորատոր սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռք բերման պայմանագրով նախատեսված վճարումների իրականացման համար:
2. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան հիմնադրամը (ՃՀՀԱՀ) հրավիրում է գնառաջարկ ներկայացնելու իրավասություն ունեցող կազմակերպություններին ներկայացնել լաբորատոր սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռք բերման համար փակ հայտեր՝ ըստ Լոտերի, որոնց ընդհանուր քանակը կազմում է 68 կտոր և որը, պայմանագիրը կնքելուց հետո 150 օրվա ընթացքում, պետք է ՃՀՀԱՀ-ի Ճարտարապետական և շինարարական լաբորատորիա մատակարարվի հետևյալ հասցեով՝ Տերյան փ., 105, Երևան, 3750009, ՀՀ: Պայմանագրի հավակնող հայտատու կազմակերպությունը պետք է ունենա նմանատիպ մատակարարումների իրականացման փորձ և համապատասխան ռեսուրսներ, որի մասին մանրամասն ներկայացված է Մրցութային Փաստաթղթում: Հայտատու կազմակերպությունը կարող է հայտ ներկայացնել մեկ, երկու, երեք, չորս, հինգ լոտերի, դրանց տարբեր համակցությունների կամ բոլոր վեց լոտերի համար: Հայտերի գնահատումը կիրականացվի ըստ յուրաքանչյուր լոտի: Հայտ(եր)ի հետ ներկայացված անհատական կամ համակցված զեղչերը կդիտարկվեն հայտերի գնահատման ժամանակ:

Սույն Միջազգային Մրցակցային Գնումը (ՄՄԳ) ներառում է հետևյալ լոտերի համարը և դրանց նույնականացումը (պայմանագրերը).

Լոտ 1 - Համախառն փորձարկման լաբորատոր սարքավորումներ

Լոտ 2 - Ցեմենտ-շաղախային փորձարկման լաբորատոր սարքավորումներ

Լոտ 3 - Բետոնի փորձարկման լաբորատոր սարքավորումներ

Լոտ 4 - Գրունտի փորձարկման լաբորատոր սարքավորումներ

Լոտ 5 - Լազերային մեքենա

Լոտ 6 - Արտածման պահարան

3. Մրցույթը կիրականացվի Միջազգային Մրցակցային Գնման ընթացակարգերին համապատասխան, ինչպես նշված է Համաշխարհային Բանկի Ուղեցույցներում, Համաշխարհային Բանկի վարկառուների կողմից ՎՋՄԲ փոխառությունների և ՄՋԸ վարկերի ու դրամաշնորհների միջոցով ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնում, որն ընդունվել է 2011թ. հունվարին, վերանայվել է 2015թ. ապրիլին («Գնումների Ուղեցույցներ») և բաց է բոլոր իրավասու հայտատուների համար, ինչպես որ այն սահմանված է Գնումների Ուղեցույցներում: Բացի այդ, խնդրում ենք հղում կատարել 1.6 և 1.7 պարագրաֆներին, որտեղ ներկայացվում է Համաշխարհային Բանկի շահերի բախման քաղաքականությունը:
4. Հետաքրքրված իրավասու հայտատու կազմակերպությունները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ **Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հիմնադրամի (ՃՀՀԱՀ) ներկայացուցիչ պարոն Վարազդատ Հովհաննիսյանից (հեռ. +374 10 583773, ֆաքս. +374 10 587284, էլ.հասե. info@nuaca.am)**, ինչպես նաև աշխատանքային օրերին ժամը 10:00-ից մինչև 17:00 ստորև նշված հասցեով կարող են ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը. Տերյան 105, Երևան, 3750009, ՀՀ:
5. Մրցութային փաստաթղթերի անգլերեն լեզվով ամբողջական փաթեթը հետաքրքրված իրավասու հայտատուները կարող են ձեռք բերել ստորև ներկայացվող հասցեով՝ համաձայն գրավոր դիմումի և վճարված չփոխհատուցվող 50000 ՀՀ դրամի դիմաց: Վճարումը պետք է իրականացվի ուղղակի փոխանցման տարբերակով՝ Արարատբանկի 15100-01964940100 հաշվեհամարին: Փաստաթուղթը կփոխանցվի փոստային ծառայության միջոցով: Մրցութային փաստաթղթերը և հետագա բոլոր պարզաբանումները և փոփոխությունները (եթե այդպիսիք կլինեն) կտեղադրվեն ազատ հասանելիություն ունեցող ինտերնետային կայքերում (www.gnumner.am և www.nuaca.am): **Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հիմնադրամը (ՃՀՀԱՀ)** պատասխանատվություն չի կրում հայտատուների կողմից փաստաթղթերի թերի, սխալ կամ ոչ ամբողջական ներբեռնման համար:
6. Մրցույթի հայտերը պետք է մինչև 2016թ. հունիսի 09-ը ժամը 15:00-ն (տեղական ժամանակով) ներկայացվեն հետևյալ հասցեով՝ ՀՀ, ք. Երևան, 3750009, Տերյան 105, երկրորդ հարկ՝ 2220 սենյակ: Հայտերի ներկայացումը էլեկտրոնային տարբերակով չի թույլատրվում: Վերջնաժամկետից ուշ ներկայացված հայտերը կմերժվեն: Հայտերը հրապարակայնորեն կբացվեն 2016թ. հունիսի 09-ին ժամը 15:00-ին ՀՀ, ք. Երևան, 3750009, Տերյան 105, երկրորդ հարկ՝ 2220 սենյակ հասցեում՝ հայտատուների ներկայացուցիչների և բոլոր նրանց ներկայությամբ, ովքեր հայտերի բացմանը մասնակցելու ցանկություն կունենան:
7. Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն Հայտային Ապահովություններով, որոնք պետք է լինեն ոչ պակաս, քան՝ ստորև ներկայացված գումարները կամ էլ ոչ պակաս, քան՝

յուրաքանչյուր լոտի համար ազատ փոխարկելի արժույթով արտահայտված նախատեսված գումարի համարժեքը.

Լոտ 1- ԱՄՆ \$ 600,

Լոտ 2- ԱՄՆ \$ 450,

Լոտ 3- ԱՄՆ \$ 4500,

Լոտ 4- ԱՄՆ \$ 5000,

Լոտ 5- ԱՄՆ \$ 350,

Լոտ 6- ԱՄՆ \$ 250.

Եթե հայտատուն ցանկանում է հայտ ներկայացնել մեկից ավելի լոտերի համար, ապա նա պետք է յուրաքանչյուր լոտի համար առանձին Հայտային Ապահովություն ներկայացնի:

8. Հասցեն, որի մասին նշվել է վերևում, հետևյալն է.

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան
հիմնադրամ (ՃՇՀԱՀ), 2-րդ հարկ, 2220 սենյակ

Պրն. Վարազդատ Հովհաննիսյանին

Տերյան 105,

ՀՀ, ք. Երևան, 3750009,

Հեռ.՝ +37410-583773

Ֆաքս՝ +37410-587284

Վեբ-կայք՝ www.nuaca.am